

հանրապէս: Անոնք կը սերին շրջանակի մը անկիւնային կանոնաւոր բաժանումներէն: Եւ ընդհանրապէս այնպէս կ'երեւի թէ հին վարպետները շրջանակը տաանի կը բաժնէին »:

Եւ Մէօսսէլ իր ներդաշնակ գիծը կը պատրաստէ տաանի բաժնուած շրջանակի մը նախագիծին (canevas) վրայ:

« Ներդաշնակ գիծ » ի այս ձեւը կը համապատասխանէ Վիթրիւվի նկարագրած հելլենական թատրոններու դասական գծադրութեան ձեւին « շրջանակի մը մէջ երեք քառակուսիներ գծելով »:

Մինչդեռ Լունտ կը գործածէ զուգարթ (isocelle) եռանկիւններու ճառագայթաւոր « տիակրամ »-ը:

Հոս դրած պատկերս կու տայ այս երեք դրութիւններէն նմոյշներ:

Այս երեք դրութիւններն ալ կրնան արդարացուիլ և համաչափութեան կանոններու պրպտումին մէջ պէտք են նկատի առնուիլ

յաջորդաբար, քանի որ մէկը կամ միւսը, կը տեսնենք թէ համապատասխան շինութիւններ կը գտնեն: Մէօսսէլի դրութիւնը մասնաւորաբար կը յարմարի թէ հելլենական և թէ միջին դարու ճարտարապետական կերտումներու, իսկ Հէմպիլի դրութիւնը առաւելապէս հելլենական շինութիւններու:

« Ներդաշնակ գիծ » ի դրութեան շնորհիւ, ճարտարապետը ոչ միայն վստահաբար կը գտնէ յատակագիծի ամէնէն յարմար համեմատութիւնները և ներդաշնակութիւնը, այլ նաեւ ուղղակի նոյն նախագիծին շնորհիւ կը ստանայ նաեւ շէնքին ճակատի համեմատութիւնները ուղղակի կապուած յատակագիծի համեմատութեանց: Ասոր մէկ օրինակը պիտի գտնենք աւելի հեռուն, երկրորդ մասին մէջ, երբ պիտի քննենք Գառնիի տաճարին ներդաշնակ գիծը:

Ճարտ. Ս. ՃԵՎԱՆՅԻՐՃԵԱՆ

(Շարունակելի)

Բ Ո Ղ Ո Ք

Չրդիւնացար ոչրեմն, ո՛վ սիրտ իմ տրկար ոչ երեր,
Կեանքի վրեւ խոյանքիւն արեւներով ծանրաբեւե,
Չրդիւնացար միւնէր իսկ սիրոյ քաղցրիկ հարուածիւն,
Ամեն ճայնէ դողացիր իրբեւ մանուշկ նորածիւն:

Քեզ կ'ոչրանաւ սիրտ երկչոտ, մաւրս լեղար դռն երբեր,
Հերոսական երգերոշս պոռթկումն անգամ բոցաշէկ
Քեզ պատճառեց սարսուռ, վախ, բռնի հանեց քեզ շարունակ,
Պայքարներս դողացիր գերդ մըսակոյտ աներակ:

Ըգրեզ խոցեց միւնէր իսկ ամեն կրծոշ խօսք ոչ բառ,
Արշաւներոշս ծանական նահանգեցիր վատարար.
Առանց քեզի ալ կրնաւ սիրել, երգել, պայքարիլ,
Երակներոշս մեջ երե մընայ արեւն մի կարիլ:

Ֆիլատեիֆիա, 3 Մարտ 1947.
Հիւանդանոցին մէջ:

ՅԱՎՈՐ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՄՈՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Կեղծ Գիտնեսիոս Արիսպագացոյն անվաւերական մէկ թուղթն է հետեւեալ բնագիրը զոր կը հրատարակենք, քաղելով Ս. Ղազարու Մատենագարանին ճառընտիր Գ. ձեռագրէն⁽¹⁾ բաղդաստելով զայն ուրիշ երկու և Իթ. ճառընտիրներուն մէջ⁽²⁾ զըտնուող օրինակներուն և Սրուանձաւանցի 1874ին հրատարակած Մշոյ Ս. Կարապետի ձեռագիր « Աստուածարանութիւն Ս. Գիտնեսիոսի », օրինակին հետ:

Կեղծ Գիտնեսիոսի վերագրուած և Տիտոսի (Պողոս առաքեալի աշակերտ), ուղղուած այս թուղթին նիւթն է հետեւեալը: Առաքեալութեան վերին ազդեցութեամբ ակնթարթի մէջ կը հաւաքուին Երուսաղեմ Ս. Կուսին ժողովուրդի գիրենք կը քաջալերէ յայտնելով իր նշումը, հրաժեշտի ողջոյնը կու տայ անոնց և իր ամենամաքուր հոգին կ'աւանդէ: Առաքեալները անոր կուսական անարատ մարմինը կը թաղեն Գեթսեմանի պարտէզին մէջ: Երեք օր անընդհատ գերեզմանին վրայ կը լսեն հրաշալուր երկնային մեղեդիներ, և ապա լուծուին: Առաքեալներէն մին հոն գտնուած չըլլալուն և վերջին անգամ մըն ալ Ս. Կոյսը տեսնել չկարենալուն համար, կը խնդրէ իր առաքելակիցներէն որ գտնէ Սնոր անթառամ մարմինը կարենայ գերեզմանին մէջ տեսնել: Զիջանելով անոր պաղատանքին կը բանան գերեզմանը, և ահա ամենամեծ զարմանքով զայն դատարկ

կը գտնեն, և խորհրդածելով կը հետեւցնեն որ ան երկինք փոխադրուած ըլլայ օրհնեղու հրեշտակներու ձեռքով ճիշտ այն պահուն, երբ թաղումէն երեք օր վերջ՝ անոնց հոգեզմայլ ներդաշնակութիւնները դադրած էին:

Այս պատմութեան ստոյգ մասն է Ս. Կուսին մարմնով երկինք վերափոխուիլը, զոր տիեզերական Եկեղեցին յարատեւ տօնակատարութեամբ կը պատուէ տարուէ տարի: Իսկ ներկայացուած մնացած զէպքերը և պարագաները յերիւրուած ըլլալու երեւոյթ ունին իրենց վիպային հանգամանքով: Առ Տիտոս այս թուղթով զբաղած են ցարդ Գարեգին Վ. Սրուանձաւանց⁽³⁾, որ առջին անգամ զայն պարզապէս հրատարակեց 1874ին, քաղելով Մուշի Ս. Կարապետ վանքի « Աստուածարանութիւն Գիտնեսիոսի Արիսպագացոյն » ձեռագրէն:

Ֆէթթէր ուսումնասէրը, Փարիզու Ազգային Մատենագարանի պատկանող ԺԲ դարու (1196) գործ « Տօնական » թիւ 44 հայ ձեռագրի մէջ հանդիպելով անոր, և կարծելով որ հրատարակուած չէ, աւելորդ միայն գերմանարէն թարգմանութիւնը 1887ին հրատարակեց⁽⁴⁾: Ֆէթթէր կ'ըսէ թէ հայերէնը յոյն բնագրէ մը թարգմանուած է, ինչ որ յայտնի կը տեսնուի լեզուէն և բառերու կազմութիւնէն: Հայերէն այս թարգմանութիւնը ասորաբանութեան հետք չունենալուն պատճառաւ « Հայկական թարգմանական մատենագրութեան ամենէն կանուխ շրջանին չի վերաբերիր⁽⁵⁾ » կ'եզրակացնէ:

Ֆէթթէր կը համարի զայն Կեղծ Գիտնեսիոսի հեղինակութիւն, և այս անտարապետութիւն է, կ'ըսէ, վասն զի նոյն հեղինակին « Աստուածային Անուններու վրայ » գրութեան Գ. գլխուն մէջ Θεοδόχοι σῶμα (աստուածընկալ մարմին), բացատրութիւնը՝ որ

1. Ճառընտիր Գ, թիւ 512, էջ 881-883.
2. Ճառընտիր Ե, թիւ 1553, թղ. 351 և 353 ա.
3. Ճառընտիր Իթ, թիւ 653, էջ 312-313.
4. Theologische Quartalschrift, 1887, pp. 133-138.
5. Հայկական Աշխատասիրութիւնը Ֆէթթէրի, Վիեննա 1895, էջ 13.

յայտնապէս Ս. Կուսին յատկացուած է, գէթ երկու անգամ առ Տիտոս այս թուղթին մէջ ալ գործածուած է:

Տաշեան Հայերէնի թարգմանած է Ֆէթթէրի յիշեալ անդրադարձութիւնները⁽¹⁾, դնելով կեղծդիոնեսեան թուղթին գերմաներէն թարգմանութեան տեղ՝ բնագիր մը՝ հանած Վիեննայի Միսիթարեան Մատենադարանի ձեռագիր (թիւ 2, թղ. 168բ-169ա) ճառընտիրէն: Օժտած է զայն «Թարգմանչի ծանօթութիւն» ներով, որոնցմէ ամենէն կարեւորը սա է: Կեղծ Գիոնեսիոսի առ Տիտոս թուղթին յոռի լեզուն կասկածէ դուրս կ'ընէ անոր մեսրոպեան դարէ չըլլալը: Երկրորդ կեղծ հեղինակին միւս գործերուն հետ թարգմանուած է սա ալ Գաւիթ հիւպատի և Ս. Սիւնեցիի ձեռքով, և դարու առաջին կիսուն, և թարգմանութեան որոշ տարին է 712ը, զոր կը հետեւցնէ յիշատակարանէ մը⁽²⁾:

Երբ վերջին տասնեակ տարիներուն, տիեզերական Եկեղեցին, լաւագոյն կերպով պատուել ուզելով Ս. Տիրամայրը, փափազեցաւ որ անոր վերափոխումը դասուի հաւատոյ մասն անխախտ ճշմարտութիւններու կարգին. այս առթիւ ստուարահատոր պատմաքննական, գաւառական և ծիսական հրատարակութիւններ լոյս տեսան երեւելի գիտնականներու ձեռնարկներով, որոնց կարգէն է նաեւ արեւելագէտ, Մարգէն Ժիւսի, Պրանսացի գիտնականին La Mort et l'assomption de la Sainte Vierge, Etudes Historico-doctrinale⁽³⁾ մեծածաւալ հատորը, ուր նա ալ զբաղեցաւ կեղծդիոնեսեան առ Տիտոս թուղթով: Գիտնականին համաձայն այս թուղթը կրկնակի կեղծ է, որ է ըսել՝ ան յօրինուած չէ Կեղծ Գիոնեսիոսէն, այլ անոր «Աստուածային Անուններու վրայ» գրութեան Գ. զիսուն Յօսօճօն օձմա մթին

բացատրութեան մեկնութիւնն է, յօրինուած յետագայ գրիչէ մը, որ ուզած է քօղարկուիլ կեղծ Արիստագացիին շուքով: 1909-ին P. Barnabé d'Alsace Պրանսերէն թարգմանութիւնը հրատարակեց առոր, իր Le tombeau de la Sainte Vierge à Jérusalem, 1913, pp. 122-125:

Հետեւեալ թուղթը առաջին վէպը կը թուի, ուր կը յայտնուի Ս. Կոստին թաղման չժամանող առաքելաւի դէպքը և այս առթիւ գերեզմանին վերստին բացման պատմութիւնը:

Այս գրութեան ծագումը Կեղծ Գիոնեսիոսէն ուշ է, ուշ է Մարիամու Գիթսեմանիի մէջ ունեցած գերեզմանին զրոյցէն, հաւանօրէն ուշ է նաեւ Կրետացի Ս. Անգրէասէն (+ 740), որ Կեղծ Գիոնեսիոսին քով Ս. Աստուածածնի մահուան ակնարկութիւն կը ճանչնայ միայն Յօսօճօն օձմա բացատրութիւնը⁽⁴⁾:

Սակայն կրկնակի կեղծ այս թուղթը, աւելի լուրջ և պատմական ճշմարտաման յօրինուածք մը ունի քան Ս. Կուսին նշման շուրջ յօրինուած միւս բոլոր անվաւեր պատմութիւնները, որոնք արեւելեան և արեւմտեան հին մատենագրութիւններուն մէջ կը գտնուին:

Առ Տիտոս ներկայ թուղթը իբր՝ աղբիւր ալ ծառայած է արարական, բիւզանդական և հայկական վէպերու՝ նոյն նիւթին շուրջ:

Արդ, եզրակացնելով պէտք ենք ըսել թէ վերջին ուսումնաքննութեանց համեմատ կեղծդիոնեսեան թուղթին հեղինակն է երրորդ անձ մը, ապրած Կեղծ Գիոնեսիոսի վերագրուած հարազատ գործերու գրութեան ժամանակէն ուշ, այն է մերձաւորապէս Բ-Թ դարերուն: Ֆէթթէրի փաստարկութիւնը՝ Յօսօճօն օձմա գտնուիլը երկու տարբեր գրութիւններու մէջ, «Աստուա-

1. Աղգային Մատենա. ԺԷ, Հայկական աշխատասիրութիւնք, Վիեննա 1895, էջ 11-17:

2. Անդ, էջ 13:

3. M. Jugie, Studi e testi 114, Vaticano 1944, pp. VIII + 747.

4. M. Jugie, անդ, էջ 158:

ծային Անուններու վրայ» և «Թուղթ առ Տիտոս» անոնց միեւնոյն անձին հեղինակութիւն ըլլալէն աւելի՝ կը ցուցնէ որ երկրորդը (առ Տիտոս թուղթը) առաջին գործին այդ բացատրութեան ընդլայնումն է, ուստի ասիկա յօրինողը առանց այլայելու փոխ կ'առնէ «Աստուածընկալ մարմին» գեղեցիկ բացատրութիւնը Կեղծ Գիոնեսիոսէն: Երկրորդ՝ սոյն թուղթին հայերէն

(Բացատրութիւն բաղդատական նշաններու: + = կը յաւելու:] = կը փոխանակէ: > = կը զեղչէ:

~ = կը փոխէ կարգը:

1 (ՁԵՌԱԳԻՐ ԷՋ 881). - Թուղթ Գիոնեսիոսի Արիստագացւոյ, զոր գրեաց պատասխանի Թղթոյն Տիտոսի Եպիսկոպոսի Կրետացւոյ:

Յաղագս նշման Կուսին Մարիամու Աստուածածնի Մար Տեառն:

Ծանկէ երբայրութիւնք քո ով վսեմականդ Տեառն. քանզի ըստ ժամանակին յորժամ հանգեռաւ էր ելանել յաշխարհէս և յաշխարհականացս, այսինքն յերկրաւորէ երուսաղեմէ և մտանել ի խորանսն լուսոյ վերինն Երուսաղեմ. ան (882) մեկնելի հրաժարմամբ յաւթապէս առ ի մէնջ տարփողական հոգեով սիրով Աստուածամայրն:

Յայնժամ և դապ սուրբ Առաքելոցն իսկ և իսկ ըստ ակնկալութեան ի բարձանց, վսեմա-

թարգմանութիւնն ալ կարելի չէ ընդունիլ թէ կատարուած ըլլայ 712ին Գաւիթ հիւպատին և Սիւնեցիի ձեռքով, քանի որ իրենք յիշեալ յիշատակարանին համաձայն թէեւ Կեղծ Արիստագացիին գործերը թարգմանած են, սակայն այս թուղթը անոր չի պատկանիր և գուցէ 740ին տակաւին յօրինուած չէր, քանի որ Կրետացին Անդրէաս չի ճանչնար զայն:

կանն կամաց աստուածային հրամանի, համահաւաքեալ ի վայրկեան ժամանակին որ էին վիճակեալք առ ի բոլոր աղգաց ի քարոզուութիւն աւետարանին, դասն գումարեալ համահամար միաբանութեամբ սուրբքն: Արդարեւ ըստ այնմ, թէ ուր լուծումն մարմնոյ անդ և արծուիք ժողովեցին: Փարելով շուրջ զամենալոյս և զկուսական անձամբն, որոց և յայնժամ աստուածամուկ և առաքելական դասուց յանդիման և բոլոր հաւատացելոցն սեռիցն հրաժարեաց յամենեցունց: Տարածեաց յայնժամ սրբամատոյց և սրաթուիչ որ առ Աստուած աղաւթիւք ի բարձունս, զամենասուրբ և զանհպելի ձեռս իւր հայելով լուսափափագ տենչանաք, առ որ ծնեալն ի նմանէ Աստուած

16. ԻԹ հրամանին, Ե հրամանացն: Ս հրամանէն:

17. ԻԹ վայրկեանի ժամանակի, որ ենն, Ս որ էին՝ ուր էին:

19. Ս + (աւետարանին) կենաց: ԻԹ համահամար] հոմար: Միաբանութեան Ե Ս գումարեալ եկաւորեալք Ե Ս համագումար:

20. ԻԹ Ե + ի միասին (սուրբքն): Ս ի սուրբքն:

21. ԻԹ > ուր: Ե + (մարմնոյ) է: Ե անդր:

22. Ե ~ ժողովին և արծուիք: ԻԹ > շուրջ: Ս զամենալոյս] զամենավսեմ:

23. Ս անձամբն] մարմնովն: Ե Ս որոց] ուստի:

23-25. Ե ~ յայնժամ յանդիման աստուածամուկս

առաքելական դասուցն ի բոլոր պարակից հաւատացելոցն սեռից: Ս ~ + յայնժամ ապա յանդիման երկուստան ճառագայթ աստուածամուկս առաքելական գնդին ի բոլոր շրջապոյտ եկեալ սեռից հաւատացելոց սրբոց դասուց: ԻԹ + պարակից (հաւատացելոց):

26. ԻԹ Ե Ս հրաժարեալ: ԻԹ Ե Ս > յայնժամ:

27. ԻԹ Ե Ս սրբամատոյց և սրաթուիչ] զսրբաթուիչ:

28. Ե աղաթան:

29. Ե զծննն: Ս լուսափափագ] յուսափափագ:

1-5. ԻԹ Թուղթ Գիոնեսիոսի... Աստուածածնի Մար Տեառն] ի յիշատակ փոխման սրբոյ Աստուածածնին և միշտ Կուսի Մար Տեառն Մարիամու, երանելոյն Գիոնեսիոսի Թուղթ, աթենացւոց առաջին եպիսկոպոսի, պապականի Թղթոյն Տիտոսի կրետացւոց եպիսկոպոսի:

Ե (ունի) Գիոնիսի Արիստագացւոյ առաջին եպիսկոպոսի աթենացւոց ըսողքին (զոր զրեաց...) առ Տիտոս Կրետացւոց առաջին եպիսկոպոս, յաղագս Աստուածածնին սրբոյ Կուսին նշման և փոխման:

6. ԻԹ վսեմականդ:

7. ԵՍ ըստ] ի + (ժամանակին) յայնմիկ յորժամ] յորում:

9. ԻԹ Ս այսինքն] այս է: ԻԹ Ե յերկրաւոր Ս + (այս է) առ ի:

10. ԻԹ Ե խորանս: ԻԹ > լուսոյ:

12. Ե > յաւթապէս: Ս + (առ ի մէնջ) ըստ ներքին մարդոյն:

13. ԻԹ Ե սիրով] սրբով:

14. ԻԹ Ե Ս ~ առաքելոց > սրբոց:

15. ԵՍ ակնկալութեան] ակնարկութեան: ԻԹ վսեմական:

մեր և որդի իւր. հատոյց որպէս խունկ անոյշս
և աւանդեաց զամենասուրբ հոգին ի ձեռս
Տեառն: Եւ այնպէս պարազարդեալ առ ի հրեշ-
տակական դասուց, վերացաւ որպէս փայլակն
35 գերարփի ի փառս վերին Նրուապետի: Ուստի
յայնժամ ապա արտասուածոր հառաչանաւք,
և ողբերգական ձայնիւ մանաւանդ թէ յուսա-
պատա(ւ)ր խնդուեամբ հրճուական հնչմամբ
սրբոց առաքելոցն և բոլորիցն պատուակեալ
40 հաւատացելոցն, յաւրինեալ բարեպաշտաբար
զմարմինն աստուածընկալ, ըստ աւրինակի
ննջեցելոյ, զկեցեալն ի վեր քան զաւրէնսն
հասարակաց հոգ(է)եշորհ երգով, և ծաղկա-
զարդ վարդապետութեամբ: Ջնոյն ասեւ աս-
տուածաբանական արտաճառութեամբք, ըստ
45 պատշաճն պիտոյից, և ձայնիւ սաղմոսաց. բար-
ձեալ Առաքելոցն ի վերայ աստուածաբեալ
բազկաց իւրեանց զմարմինն ամենասուրբ ստու-
գապէս որպէս զմայր լուսոյն, և զգանձն պատ-
50 ճառ անսպական կենացն ազգի մարդկան: Չոր
ըստ ակնարկութեանն ի բարձունս հասարակաց
Փրկչէն ստորիջեալք վաղվաղակի հրացեալք

31. **U** + յուսով մեծաւ (հատոյց): **ԻԹ** > անուշս:
32. **Ե** **U** աւանդեալ, + (հոգին) իւր:
33. **Ե** > առ:
34. **Ե** դասուն:
35. **ԻԹ** + յաշխարհախաղաց (ի փառս): **Ե** + զե-
րարփիւփայլ ակնախաղաց յահեղ (փառս): **U** + զփայ-
լակն ի գերարփի յաւետախաղաց (փառս):
36. **ԻԹ** արտասուածոր: **U** ~ ողբերգական ար-
տասութիւն հառաչանոց:
37. **ԻԹ** ողորբերգակ ձայնիւք:
39. **ԻԹ** պատուակեալ պարարեալ: **Ե** պարապա-
տուակեալ: **U** պարապտոյա կեալ:
40. **ԻԹ** բարեպաշտապէս:
41. **Ե** աւրինի:
42. **ԻԹ** **U** ննջեցելոց:
43. **ԻԹ** հասարակ:
44. **ԻԹ** **Ե** **U** վարդապետութեամբք:
45. **ԻԹ** **U** արտաճառութեամբք:
46. **Ե** պատշաճի: **ԻԹ** **Ե** **U** ձայնիւք:
47. **Ե** + (առաքելոց) սրբոց:
48. **U** իւրոց: **Ե** + (ամենասուրբ) կուսին:
49. **U** > որպէս: **Ե** + (եւ) եղին:
50. **ԻԹ** **Ե** ~ անսպական պատճառ: **U** > զոր:
51. **ԻԹ** **Ե** **U** ի բարձունս ի վերուստ:
52. **Ե** **U** փրկչին: **ԻԹ** **Ե** իջուցեալ: **U** ստորիջեալ:
Ե հրացեալք չիացեալք:

աստուածամուխ հրոյն կայծակամբք եգին ի
տեղուջն կոչեցեալ Գեթսեմանի, լսելով մինչեւ
ցերիս աւուրս ի վերայ ամենասուրբ Թաղմանն
զսաղմոսերկութիւնս հրաշալուրս հրեշտակա-
պետական ձայնիցն, և այլ ոչ եւս: Վասն որոյ
ի հաւատարմութիւն այսոցիկ իրակերտութեանց
գտաւ ոմն մի առ ի նոցանէ իսկ յառաքելոցն
սրբոց նուազեալ ի թուոյ նոցա ի Ժամանակի
զուգահաւաքմանն: Որով եկեալ յետոյ բռնազ-
բաւոնալ զառաքեալսն առ ի ցուցանել ակն
յայտնի զգանձն անկողոպտելի, զմարմին ամե-
նաւրհնեալ կուսին: Հարկաւորեալք յայնժամ
ընուլ զտարփումն ելբաւրն, բացեալ զգերեզ-
մանն գոին ունայն և թափուր ի սուրբ մար-
մնոյն և (883) զգացեալք անդուստ ի միա առին,
թէ յետ դադարելոյ հրեշտակական աւրճու-
թեանցն, փոխադրեալ եղեւ մարմինն սուրբ, ի
ձեռն նոցին իսկ հրաբուռն զաւրացն, գերաշ-
խարհապէս ի տեղին մեծարգոյ և մեծապատիւ
փառաց, որ գիտէ ինքն միայն որ հրաշիցն է
Աստուած, ծածկեալ առ ի բոլոր երեւելի և ի
զգայական աշխարհէ: Չայսոսիկ գրով պատմեաց

53. **U** եղեալ:
54. **ԻԹ** ~ զգեթսեմանի կոչեցեալ: **Ե** > մինչեւ:
55. **Ե** զերիս: **ԻԹ** **U** յերիս: **Ե** + (թաղման) նորա:
56. **U** > հրաշալուրս: **U** հրեշտակականս:
58. **Ե** ի երեւի:
59. **ԻԹ** **Ե** **U** ի նոցունց:
60. **ԻԹ** **U** + առ (ի թուոյ):
61. **ԻԹ** զուգահաւաքմանն հաւաքմանն: **ԻԹ** **U**
որով որոյ:
62. **ԻԹ** + (ցուցանել) նմա:
63. **U** + (զմարմին) վսեմական:
64. **ԻԹ** + ապա (յայնժամ): **Ե** նոյնժամայն:
65. **U** ընոյր տարփումն:
66. **ԻԹ** ~ թափուր և ունայն: **ԻԹ** + առ (ի սուրբ):
67. **U** + յայնժամ (զգացեալք): **Ե** զգացեալ:
68. **Ե** + (զադարելոյ) ձայնիցն: **U** աւրհնութեանցն]
սաղմոսերգութեանց:
70. **Ե** նոցունց: **U** նորին: **U** + (հրաբուռն) սեռից:
U + համբարձեալ (զերաշխարհապէս):
71. **ԻԹ** **Ե** **U** մեծարգի: **U** մեծապատիւ լուսապատիւ:
72. **ԻԹ** որ գիտէ որպէս գիտէ: **Ե** ~ միայն ինքն:
73. **ԻԹ** **U** > երեւելի և ի: **U** զգայ:
74. **U** + (աշխարհէ) նմա փառք յաւիտեանս ամէն:
U > Չայսոսիկ գրով... միեկեւ զերբ: **Ե** + (աշխարհէ)
ի Գերաստո Յիսուս ի Տէր մեր որում պատիւ և զաւրու-
թիւն յաւիտեանս յաւիտենից ամէն: **Ե** > Չայսոսիկ...

75 մեղ մեծն Դէոնէսիոս Արիստագացի ամենացեղոյ
այսպիսի բանս ի մէջ եղբայրութեան, եթէ 85
առաջին եպիսկոպոսն: Եւ արդ որ այսպէս, և
հոգիք անցելոց սրբոց մարդկան յաշխարհէս,
ի զարմանալի դրախտին փափկութեան լինին,
մինչեւ ի Ժամանակս խոստմանն: 88

80 կալեալ զի առ ի կենցաղոյս յարմարս, միան-
գամայն փոխադրեցաւ յառաւել կենդանութիւն
լուսոյ յերկիրն կենդանեաց: Որովք ապա թե-
րեւս պարտեցէ, կամ որպիսեալք ներբողական
գրուատեալք պատկեալ հաւր ընդգիմաբերի

միեկեւ զերբ: **ԻԹ** + (աշխարհէ) ի Գերաստո Յիսուս
ի Տէր մեր որում ընդ Հաւր և ընդ Հոգւոյն սրբոյ փառք
և պատիւ յաւիտեանս ամէն: **ԻԹ** > Չայսոսիկ...
միեկեւ զերբ:

Հ. ՍԵՐՈԲԵ ԱՔԸԼԵԱՆ

ԳԻՒՂԻՆ ԳԻՇԵՐԸ

Ճառագայթներն հիմա երկչոտ ոգիներ,
կը թափառին լոկ լեռներու կատարին.
Անտառներէն շուքը կ'առնէ սեւ թեւեր
Նոճին ինչպէս գերեզմանի եզերքին:

Ո՛րքան ճնշիչ է խաւարն այս գիշերուան,
ինչպէս լքուած սրտերուն մէջ յիշատակ.
Կարծես պէտք է վարժուինք մենք յաւիտեան,
կեանքն երազել, յետոյ հանգչիլ քարին տակ:

Աստղերու լոյսն ալեկոծեալ կը հասնի,
Սարի տրտում նըւագին հետ հովուական.
Զառանցանք է թէ հանելուկ վաղեմի

Որ ամէն օր մարդը մտնէ գերեզման,
Եւ վերըստին ապաւինած յարութեան
Ողջունէ կեանքն երեխայի մը նման:

ՎԱՏԱՏՈՒՐ